

Գնդեվազ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սևակ Մկրտչյան
Հեռախոս՝ +374 93647222

Գնդեվազ գյուղ գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան սարավանդի վրա՝ Երևան-Ջերմուկ նոր խճուղու ձախ կողմում, ծովի մակարդակից 1850 մետր բարձրության վրա: Գնդեվազի շուրջ բարձրացող ոչ բարձր լեռներն այն դարձնում են մի գեղեցիկ ամֆիթատրոն: Գնդեվազը շրջապատված է երեք կողմից գեղեցիկ անտառներով և բարձր սարերով և մի կողմից դեպի Արփա գետը տանող խորը ձորով:

Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 30 կմ, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը՝ 163 կմ: Մոտակա քաղաքը Ջերմուկն է, որից հեռավորությունը 12 կմ է:

Գյուղի մերձակայքում կա հազարամյա մի եկեղեցի, որը կառուցվել է Սյունիքի Սոփիա իշխանուհու կողմից, օծվել՝ 931 թ. և անվանակոչել Գնդեվանք:

Գնդեվազը պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի հնագույն բնակավայրերից է: Առաջին գրավոր հիշատակությունը Միսական տան մեծ պամիչ Ս. Օրբեյանինն է, ուր ասվում է, որ Սյունյաց Սոփի իշխանուհին Վայոց ձորի Գնդեվանք եկեղեցին կառուցելու հետ (936 թ) հիմնել է նաև համանուն գյուղը և նվիրել վանքին: Չնայած պատմիչի այս տեղեկությանը՝ տարածքի պատմամշակութային որոշ հուշարձաններ թույլ են տալիս պնդելու, որ բնակավայրը շատ ավելի հին է:

Պատմական հնություններից են Գնդեվազում գտնվող Սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցին (1686 թ.) և 11-րդ դարի ջրանցքը: Գնդեվազի ջրանցքը կառուցվել է 1008 թ. Սյունիքի Վասակ թագավորի ժամանակ: Վանքի վանահայր Սարգիսը Դիտավոր լեռան վրայից Ջկնարած գետի ակունքից ջուր է բերել տալիս: Ջրանցքի երկարությունը 22 կմ է: Այն ժամանակներում ջրանցքի ջրով ոռոգվել են մոտ 400 հա վանքապատկան հողեր, այժմ՝ մոտ 1000 հա: Գնդեվազի այժմյան վարչական տարածքում պահպանվել են պատմական մի քանի բնակատեղիների ավերակներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր է:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից, Վայոց ձորի Խաչիկ, Գնիշիկ, Արենի գյուղերում վերաբնակված, ապա մասամբ Գնդեվազ տեղափոխված բնակիչների սերունդներն են: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ:

Գնդեվազից 2 կմ հարավ-արևմուտքում է գտնվում «Գնդեվանք»-ի համալիրը (X-XVII դարեր) և իջևանատունը (X-XIII դարեր), գյուղի հյուսիսային մասում՝ XVII-XVIII դարերի պարիսպը, 1 կմ հյուսիս՝ Սբ. Խաչ մատուռը (XIX դար), ավերակ եկեղեցին (XVII-XVIII դարեր), բերդի ավերակներ (ուշ միջնադար) և XI-XIX դարերի խաչքարեր:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 72 հուշարձան: